

յեղափոխական շարժումներ ու կոտորածներ, ուսուսանողիական հրէշաւոր հակամարտութիւն հայոց արիւնոտ դատին շուրջ, եւ ի վերջոյ համաշխարհային պատերազմ ու հայկական անօրինակ Գողգոթայ... Թիւրքահայաստանը՝ ամայի, Ռուսահայաստանը՝ նոր բռնութեան ճանկերում...

Ահա վերջին կիսադարեակի պարունակութիւնը, մեզի համար՝ դաժան, սոսկումնալի... Վայրկեաններ վսեմ ու խօլ յափշտակութեան եւ վայրկեաններ սրտաճաք յուսախարութեան...

Եւ սակայն — մարդկային բնութիւնը, չէ՞, բնդհանրապէս հակուած է դէպի լաւատեսութիւն — կը շտապեմ սրբել վշտի ու յուզման արցունքներս եւ մխիթարել ինքզինքս, մխիթարել եւ ընթերցողս, նշմարելով այդ միսուն տարուան անօրինակ անցուդարձերու մէջ՝ դարձեալ լաւը, դրականը, լուսաւորը, յուսատուն... Կը մտաբերեմ մէկ խօսքը զօրավար Իգնատիեւի, որ ճիշդ այն օրերուն, 50 տարի առաջ, Ռուսաստանի դեսպանն էր — մեծազոյն դեսպաններէն մէկը — Սուլթաններու մայրաքաղաքում...

— «Հայութիւնն այսօր դիակ մըն է», կ'ըսէր Իգնատիեւի, խօսելով Թիւրքահայերու մասին... Կ'ուզէր ըսել — նախիր մը, առանց ազգային ինքնաճանաչութեան ու արժանապատուութեան, առանց մարդկային կերպարանքի, որ հլու հնազանդութեամբ քարշ կուտար դրաստային վիճակ մը բռնաւորի հարուածներուն տակ...

Հայութիւնը, Թիւրքահայութիւնը, գուցէ ամբողջ հայութիւնը իր զանգուածին մէջ իրօք դիակ մըն էր այն օրերուն:

Իսկ այսօր — մի՞թէ նոյնն է... Անտարակոյս, մեծ ճամբայ մը կտրեր է հայ ժողովուրդը անցեալ դարու եօթնամասնական թիւերէն ի վեր եւ — հակառակ բոլոր հարուածներուն ու յօշոտումներուն, հակառակ բոլոր զբրկանքներուն, որոնց ենթակայ է թէ՛ ընաշխարհում եւ թէ՛ աքսորական գոյութեան մէջ — այսօր հայութեան ընդհանուր պատկերը շա՛տ հեռու է այն թանձրացած ազիտութեան, գետնաքարշ ստրկամտութեան եւ դիակնային պայանձումի վիճակէն, որու մէջ կը գտնուէր

ասկէ յիսուն տարի առաջ: Ա՛ղբ մըն է ան պատկառելի մշակոյթով եւ յեղափոխական ալէժուսի անցեալով, ոչ աւելի փոքր թուով, քան կէս դար ասկէ առաջ. ա՛ղբ մը, որ ունի հերոսներու, նահատակներու սքանչելի բոյլ մը, որ դիտակ է իր իրաւունքներուն, առգորուած է — ի դէմս իր ղեկավարող տարրերու — մարդկութեան մեծագոյն խղէալներով, տոգորուած է ամենէն առաջ՝ իր ազգային աղատագրութեան դաղափարով...

Այդտեղ — մեր սիրտիանը: Այդտեղ — անգնահատելի վաստակը յիսուն տարուան մեր արիւնոտ թաւալումներու եւ անլուր փորձութիւններու ճամբուն վրայ:

\*\*\*

Ռուսաստանը վաղուց արդէն — Պետրոս Մեծի օրերէն — կը ձգտէր դէպի ազատ ծով: Կը ձգտէր դէպի Պոլիս, դէպի «աշխարհի կենտրոնը», որ ուսնները մկրտեր էին «ցարաքաղաք» անունով (Յարզրադ) եւ որու նուաճումը երազն էր ուսական շարք մը սերունդներու: Եւ նորագոյն պատմութեան մէջ Ռուսիոյ յաղթական դրօշը քանի մը անգամ հասաւ արդէն Պոլսոյ դռները, բայց միշտ ալ յետ նահանջեց, վասնզի այդ ղեկավարական կենտրոնի շուրջը հասաւ մըրցում մը կար եւ ցարի բանակը իր յառաջխաղացութեան ընթացքին ամէն անգամ կը տեսնար իր դէմը ծառայած՝ արեւմտեան պետութիւնները, մասնաւորապէս Անգլիան:

Անգլիան, որու գերագոյն մտահոգութիւնն էր ազատ պահել Հնդկաստանի ճանապարհը, կանգուն պահել բրիտանական տիրապետութիւնը ծովերու եւ ովկիանոսներու վրայ անհանգստութեամբ կը դիտէր, թէ ինչպէս «ուսական վիթխարի սառցակոյտը» Պետրոսի օրերէն ի վեր անդուլ կը սահէր դէպի հարաւ ու Արեւելք, դէպի Կովկաս, Պարսկաստան ու Թուրքիստան, դէպի Սիբիր ու Անդրկասպեան նահանգները, դէպի Էրզրում ու Պոլիս:

Եւ ամէն անգամ, որ հիւսիսային արջը կը մօտենար իր նպատակակէտին ու կը փորձէր իր թաթը դնել «աշխարհի կենտրոնին» վրայ, անմիջապէս Ալբիոնը վրայ կը հասնէր իր հրակայ նաւատորմով եւ յետ կը մղէր վտանգաւոր մրցակիցը: